75. ՕԽՏԸ ՋԵՂԻ ՄԱՐԹ ՏՓՈՂԸ

Մե չատ լոպազ, գլոխ գովող մարթ ա հըլնում: Էս մարթը սաղ օրը հիրա չարած քաջութիւններից ա պատմում: Ով ճանչնում ա, ծծղում ա, ով չի ճանչնում, հավատում ա:

Մե օր ասում ա. «Մե մարթ տեսա, մե մարթ՝ էնքան ուժով, էնքան ուժով, ասի՝ ուժս փորցեմ: Գյուլաչ բռնի: Դեսը քաշի, դենը քաշի, անջաղ քցի ջետինը: Ձիչ էր մնում, ընձի ախտեր: Ախչարը դժար թե էտենց ուժով մարթ հըլնի: Ա՛յ մարթ, չիչ էր մնում ընձիկ էլ ախտեր: Ես էտենց մարթ չի տեսե»:

Ամենից չատ գլուխ էր գովում կնգա մոտը. «Կնի՛կ, էս սարը, որ կա, առաչ ըստե չէր, էրկու վերս էն յանն էր: Տեսա մեր տանը հյուսիսի ցուրտ քամին ա բռնում, տեղափոխեցի ըստե:

Գացի կռիվ: Թչնամիքը էկան: Աստղին թիվ կար, ըտոնցը թիվ չըկար: Մեր զորքերը թողին փախան:

Ես մինակ թուրը քաշի ու կայնա, ասի.—Մոտ չըգաք, հըմնիտ վիզը կըթռցում:

Տեսա ըտուց կայնան, հիրար խետ խոսացին:

Մեկն ասավ.—Ըստուց հըլա մե սալդաթն ա էսքանիս դեմը թուրը քաշե կայնե, բա որ մնացածները գան, վայ մեր օրին: Էրնեկ էն պետությանը, որ ըստու պեստ հարուր զինվոր ունի:

Մե խոսկով, ի՞նչ ասեմ, ա՛յ կնիկ, մինակ օխտը գեղի մարթ կըտփեմ, կողները կըջարթեմ»:

Էս կնիկը չատ լռեց, հըմա տեսավ՝ մարթը չատ ա զայլա տանում, հելավ գնաց հիրանց հարևան գեղը ու խառցուց.—Ո՞վ ա ձեր գեղի ամենաուժեղ մարթը:

Տարան մե չոբանի նչանց տվին, ասին.—Մեր գեղի մեչը ըստուց ուժով մարթ չըկա: Անունը Սաքո յա:

Էս կնիկը սպասավ չանքի հիրկուն: Հիրկուն չոբանը ոխճարը բերեց, տեր-տեր արավ:

Էս կնիկը գնաց չոբանի մոտը, ասավ.—Սաքո՛ ախպեր, մե խնթիր ունեմ, թե որ կատարես, ինչ ուզես, կըտամ:

Ջոբան Սաքոն ասավ.—Ասա՛ տենամ՝ ի՞նչ ա խնթիրքտ:

—Իմ խնթիրքն էն ա, Սաքո՛ ախպեր, որ իմ մարթին մե լավ տփես, շատ գլուխգովան ա, զահլես տարեր ա, ասում ա, որ հինքը օխտը գեղի մարթ տփող ա:

Զոբանը խարցնըմ ա.—Ո՞վ ա քո մարթը:

—Զընդըրբուլցի Հակոն:

—Հակո՞ն ա գլոխ գովում:

—Հա՛, Հակոն:

—Հէքուց՝ ժամը 12-ին, կըգաք թըբա մեր գեղը, ես կըգամ, ճամբի վրա կըբռնում, հախից կըգամ:

Կնիկը չնորակալ հելավ, էկավ հիրանց տունը:

Առավոտը լուսը բացվավ, խաց ճերան, տան գործերը կատարին, հելավ ճեսօր:

Կնիկը մարթին ասավ.—Մա՛րթ, էթանք մե չիչ չոլը ման գանք:

Մարթն ասավ՝ էթանք:

Գացին չոբանենց գեղի յանի ճամբով: Էն յանից չոբանն էկավ ու կպավ էտ մարթին:

—Շա՛նորթի, հո քոռ չե՞ս, էկար հընգար աչկս,—ասավ չոբանը ու մե հարված տվեց:

Էս մարթը ետ չըմնաց, մե հարված էլ հինքը տվեց: Զոբանն էս տեսավ: Էրկու ձեռով վերցուց օթի մեչ, տփեց ջետինը: Գոմփով, թաՙփկով էնքան տվեց, ըստրա նըխտը կդրավ:

Կնիկը մեչ հընգավ.—Ախպե՛ր, խեխճին հո՞ չես սպանի, մեխկ ա:

Զոբանն ասավ.—Քույրի՛կ, չեզիկ եմ բաչխում, թե չէ էնենց կանի, որ տուն չըխասնեմ:

Էս մարթն ասավ.—Բա որ դուք քուր ու ախպեր եք, էս ի՞նչ ա իմ օրը, բա՞ փեսին էս օրը կըքցեն:

Զոբանն ասավ.—Փեսա՛ ջան, գնա՛, ըստուց ետը շատ լսա, չիչ խոսա:

Զոբանը գնաց:

Կնիկը մարթին ասավ.—Ա՛յ մարթ, բա ասո՞ւմ իր՝ ես օխտը գեղի մարթ տփող եմ, մե մարթ էլ չըկարցար տփես:

—Ա՛յ կնիկ, քո ախպերը տասչոր գեղի մարթ տփող ա, ես չի հիմանում:

Ասում են՝ էտ օրից ետո էս մարթը էլ գլոխ չէր գովում: Ես չեմ ստուգե, թե դուք ստուգեր եք, ճիչտ ա, ուրեմն՝ ճիչտ ա. ինչը ճիչտ ա, ճիչտ ա, ճիչտ բանին ճիչտ կասեն, սութ բանին՝ սութ: